

Կարծիք

Էմմա Աշոտի Թափաղյանի «Հարկային քաղաքականության ազդեցության գնահատումը << մակրոտնտեսական ցուցանիշների վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Արենախոսության թեմայի արդիականությունը

Հանդիսանալով պետական կարգավորման կարևորագույն գործիքներից՝ հարկային քաղաքականությունն անմիջական ազդեցություն ունի տվյալ երկրի մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Արդյունավետ իրականացվող հարկային քաղաքականությունը մի կողմից ապահովում է ֆիսկալ գործառույթի՝ պետության բյուջեն հարկային եկամուտներով համալրումը, մյուս կողմից նպաստում է ներդրումների ավելցմանն ու չի դրդում բնակչությանը խուսափել հարկերի վճարումից: Բացի այդ, գրագետ հարկային քաղաքականությունը նաև հիմք է հանդիսանում տնտեսության կայուն զարգացման համար:

Այս առումով ընտրված ատենախոսության թեմայի արդիականությունն ավելի է կարևորվում, պայմանավորված այն հանգամանքով, որ վերջին տարիների ընթացքում << տնտեսական աճի հիմքում են ընկած եղել արտաքին գործոններ և երկիրը կանգնած է էական ներքին զարգացում ապահովելու գգալի խոչընդոտների առջև: Աշխատանքում փորձ է արվել բացահայտել հարկաբյուջետային քաղաքականության և տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների միջև կապը << համար:

Հերազուրության նպատակներն ու խնդիրները

Ատենախոսության նպատակն է գնահատել Հայաստանի հարկային քաղաքականության ազդեցությունը երկրի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վրա և բացահայտել հարկային քաղաքականության հետագա զարգացման ռիսկերն ու հնարավորությունները: Նշված նպատակի իրականացման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Հետազոտել հարկային համակարգի դերը, գործառույթները և բովանդակությունը,
- Վերլուծել հարկային համակարգի և տնտեսական աճը բնութագրող առանցքային մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունները,
- Համակարգել հարկերի գործառույթները փոխակերպվող տնտեսություն ունեցող երկրների համար,
- Վերլուծել << հարկային մուտքերի դինամիկան և ժամանակակից միտումները,
- Ուսումնասիրել << հարկային քաղաքականության հնարավոր սցենարները,
- Ելնելով հարկային համակարգի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունից՝ ձևավորել հարկային մուտքերի վերին և ստորին սահմանները,
- Ներկայացնել հարկային բարեփոխումների առաջնահերթ խնդիրները և դրանց լուծման ուղիները,
- Գնահատել հարկային եկամուտների և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապվածությունը:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

1. Գնահատվել է հարկման մակարդակների միջակայքը: Բացահայտվել է, որ հարկերի խթանիչ գործառույթը ուղեցուց է միջակայքի վերին սահմանի համար, իսկ ֆիսկալ և կարգավորիչ գործառույթները ուղեցուց են հարկման մակարդակի միջակայքի ստորին սահմանի համար:
2. Հիմնավորվել է, որ հարկային քաղաքականությունը, ելնելով հարկերի խթանիչ գործառույթից, պետք է նպաստի տնտեսական աճը բնութագրող փոխկապակցված նպատակային ցուցանիշների՝ ՀՆԱ-ի օպտիմալ աճի, առևտրային հաշվեկշռի բարելավմանը, զբաղվածության աճին և գների կայունության ապահովմանը:

3. Կոռեյացիոն և էկոնոմետրիկ գնահատման միջոցով մշակվել է մոդել և բացահայտվել է հարկային եկամուտների ուժեղ փոխկապվածություն միջին աշխատավարձի հետ, և չափավոր կախվածություն՝ արտահանման և տնտեսական ակտիվության ցուցանիշի հետ:
4. Հումքի արտահանման մաքսատուրքի սահմանման համար մշակվել է մոտեցում և առաջարկվել է որպես ուղեցույց կիրառել բանաձև՝ ձևավորված տվյալ արտադրանքի գնի մեծագույն և նվազագույն արժեքների վրա:

Ապենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ինչպես նաև արդյունքների փորձարկումն ու հրապարակումը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկերի դերի և գործառույթների համակարգումը» գլխում քննարկվել են հարկերի դերը տնտեսության մեջ, հարկերի գործառույթներն ու նշանակությունը տնտեսական համակարգում, ինչպես նաև իրականացվել է համեմատական վերլուծություն ԵԱՏՄ երկրների ու Վրաստանի հարկային մի շարք ցուցանիշների միջև:

Ատենախոսության երկրորդ՝ «Հարկային համակարգի և մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապակցվածությունը» գլխում իրականացվել է ԵԱՏՄ և Վրաստանի ուղղակի հարկերի դրույքաչափերի, մի շարք երկրներում հարկային բեռի համեմատությունն ու ուղղակի հարկերի վերաբերյալ գրականության ակնարկի ուսումնասիրություն:

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային եկամուտների ազդեցությունը տնտեսական աճի վրա» գլուխը նվիրված է << հարկային եկամուտների և դրանց դինամիկայի ուսումնասիրությանը, կիրառվել է մոդել, որով փորձ է արվել գնահատել << մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների ազդեցությունը հավաքագրված հարկերի ընդհանուր ծավալի վրա, ինչպես նաև ներկայացվել է առաջարկություն, թե ինչպես սահմանել արտահանման մաքսատուրքեր:

Դիրողություններ ավենախոսության վերաբերյալ

Աշխատանքը գերծ չէ նաև թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Ատենախոսությունյան տեքստում և սեղմագրում առկա են տարբերություններ, մասնավորապես, ատենախոսության տեքստում նշված է՝ «Հետազոտության օբյեկտը << հարկային քաղաքականությունն է, իսկ առարկան՝ հարկային քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա», իսկ սեղմագրում՝ «Հետազոտության օբյեկտը << հարկային համակարգն է, իսկ առարկան՝ հարկային քաղաքականության արդյունավետ ազդեցության գնահատումը մակրոտնտեսական ցուցանիշների վրա, և դրան առընչվող հիմնախնդիրները»: Նման տարբերությունները շփոթեցման հիմք են հանդիսանում և ունեն հստակեցման կարիք: Ընդ որում, հարկային քաղաքականությունը չի կարող հետազոտության օբյեկտ հանդիսանալ:
2. Նորույթներից երկրորդ կետը չի կարող հանդիսանալ նորույթ, քանի որ տնտեսագիտության տեսության դասագրքերում արդեն իսկ սահմանված է, որ հարկային քաղաքականությունը պետք է նպաստի տնտեսական աճին և կարևորագույն չորս նպատակներին:
3. Չնայած այն հանգամանքին, որ հեղինակը նշել է մոդելի մշակումը որպես ատենախոսության նորույթ, պարագրաֆ 3.2-ում հստակ տրված է հղում այն հետազոտություններին, որոնցից վերցվել է տվյալ մոդելը: Ուստի, մոդելի հեղինակն ատենախոսը չէ:
4. Անհասկանալի է, թե ինչո՞ւ է հեղինակը պարագրաֆ 1.2-ում, որի անվանումն է «Հարկերի գործառույթների համակարգումը», դիտարկում << հարկային եկամուտների ցուցանիշները, որը չի համապատասխանում վերնագրին և կոնտեքստին:
5. Էջեր 54-57-ում հեղինակը ներկայացնում է մի շարք մակրոտնտեսական ցուցանիշներ ԵԱՏՄ երկրների համար և անհասկանալի կերպով առանց որևէ պատճառահետևանքային կապի նշում է. «Այսպիսով, նպատակային ցուցանիշների համակարգված վերլուծության և գնահատման պարագայում կարելի է նշել, որ հարկային համակարգը հիմնականում դրական է

անդրադառնում բոլոր չորս՝ ՀՆԱ, առևտրային հաշվեկշիռ, գործազրկություն, գնաճ, նպատակային ցուցանիշների վրա»: Մինչդեռ, ատենախոսությունում որևէ հարկային քաղաքականության մասին խոսք չի գնացել (միայն ներկայացվել են մի քանի ցուցանիշներ) և պարզ չէ, թե՞ ինչու է հեղինակը եկել նման եզրահանգման:

6. Այդուսակ 2.1.7 անվանումը չի համապատասխանում իր մեջ ներկայացված տվյալներին: Մասնավորապես, այն կոչվում է՝ «ՀՀ արտահանման կառուցվածք», մինչդեռ իր մեջ ներկայացված է ՀՀ արտահանումն ըստ երկրների:
7. Էջ 63-ում հեղինակը նշում է. «Արտահանման աճը ակնհայտ դրական արդյունք է և համահունչ է տնտեսական աճի հետ»: Անհասկանալի է, ի՞նչ է նշանակում տվյալ դրույթը, քանի որ զուտ արտահանումը հանդիսանում է ՀՆԱ-ի ըստ ծախսերի հաշվարկման մեթոդի տարրերից մեկը և անմիջականորեն ազդում է ՀՆԱ ցուցանիշի վրա:
8. Հեղինակն առաջարկում է նվազեցնել եկամտային հարկի դրույթաչափը, սակայն բազմաթիվ հետազոտություններ ցույց են տալիս, որ ամենաքիչ բացասական ազդեցությունը ՀՆԱ-ի վրա ունի հենց եկամտային հարկը: Գտնում ենք, որ հեղինակն ամբողջությամբ չի ուսումնասիրել տվյալ թեման և առկա ժամանակակից հետազոտություններն, ու սխալ եզրահանգումներ և առաջարկ է արել:
9. Էջ 68-ում հեղինակն օգտագործում է. «աշխատանքային եկամուտների հարկում» եզրույթը: Նման հասկացությունը ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է:
10. Պարագրաֆ 2.2-ի վերնագիրն է՝ «Հարկային համակարգի ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշների վրա», մինչդեռ պարագրաֆում ներկայացվում են պարագրաֆ 1.3-ում տեղ գտած ԵԱՏՄ և Վրաստանի ուղղակի հարկերի դրույթաչափերի համեմատություն, հարկային բեռի մի շարք երկրներում համեմատություն ու ուղղակի հարկերի վերաբերյալ գրականության ակնարկ:
11. Չնայած պարագրաֆ 3.1-ի անվանումն է «ՀՀ հարկային եկամուտների դինամիկան և տնտեսական աճը», սակայն ՀՀ տնտեսական աճի վերաբերյալ որևէ վիճակագրական տվյալներ կամ հետազոտություն բացակայում է:
12. Էջ 81-ում հեղինակը գրականության ընդհանուր ակնարկից եզրակացնում է, որ «հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցության վրա ամենամեծ

ազդեցությունն ունենում են եկամտային հարկի փոփոխությունները, որին հաջորդում են ակցիզային հարկերը»: Մինչդեռ, ո՞չ իր կողմից բերված գրականության ակնարկում, ո՞չ էլ բուն ատենախոսության մեջ նմանատիպ եզրակացության դուրս բերման համար փաստարկներ չկան:

13. Ատենախոսությունում առկա են մի շարք հակասություններ: Մասնավորապես, Էջ 92-ի 2-րդ պարագրաֆում հեղինակը նշում է, որ «Այս միտումը հիմնականում արտահայտվում է ԱԱՀ հավաքագրման աճով, որի աճը, ըստ վերջին տվյալների, արդեն բացասական է»: Մինչդեռ, տվյալ դրույթը հակասում է «Հիմնակագրական կոմիտեի 2024 թ. Տարեգրքերում ներկայացված ցուցանիշներին, մասնավորապես, ԱԱՀ-ն 2020 թ. կազմել է 471,587.9 մլն դրամ, 2021 թ.' 555,986.4 մլն. դրամ, 2022 թ.' 679,555.6 մլն. դրամ, 2023 թ.' 767,173.5 մլն. դրամ, 2024 թ.' դեռևս վերջնական պաշտոնական ցուցանիշները հրապարակված չեն»:
14. Պարագրաֆ 3.2-ում՝ բացակայում է ընտրված մոդելի հիմնավորումը, առավել ևս հաշվի առնելով այն, որ ատենախոսության նպատակն է «գնահատել Հայաստանի հարկային քաղաքականության ազդեցությունը երկրի տնտեսական աճը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների վրա և բացահայտել հարկային քաղաքականության հետագա զարգացման ռիսկերն ու հնարավորությունները»: Ներկայացված մոդելը կրում է հակառակ բնույթ՝ ցուց է տախս, թե ինչպես են մակրոտնտեսական ցուցանիշները ազդում հավաքագրված հարկերի ընդհանուր քանակի վրա: Գտնում ենք, որ առկա են հակասություններ ատենախոսության նպատակի/թեմայի և առաջարկված մոդելի միջև:
15. Ատենախոսությունում ներկայացված մոդելը մշակման և ուղղման կարիք ունի, քանի որ նախ և առաջ պարունակում է հետերոսկետաստիկություն և $R^2=0.57$, ինչը նշանակում է, որ ընտրված գործոնները չեն ազդում ընտրված ցուցանիշի վրա: Անհասկանալի է հեղինակի կողմից ատենախոսության վերջին գլխում գրականության ակնարկի իրականացումը: Ըստ էության, վերջին գլուխը պետք է նվիրված լինի առաջարկներին և դրանց ազդեցության գնահատմանը:
16. Անհասկանալի է հեղինակի կողմից ատենախոսության վերջին գլխում գրականության ակնարկի իրականացումը: Ըստ էության, վերջին գլուխը պետք է նվիրված լինի առաջարկներին և դրանց ազդեցության գնահատմանը:

մակրոտնտեսական ցուցանիշներին, վերջին գլխում կրկին իրականացվում է գրականության ակնարկ և անհասկանալիորեն այն նվիրված է պղնձի արտահանման մաքսատուրքերի դրույքաչափերին: Այս գլխում ուսումնասիրվել են պղնձի գնի և խտանյութի արտահանման ցուցանիշները <<-ում, սակայն պարզ չէ, թե ինչպիսի առնչություն ունի դա ատենախոսության նպատակի, ուսումնասիրության առարկայի և նախկինում աշխատությունում իրականացված հետազոտության հետ:

17. Ատենախոսությունում գրականության ակնարկն արված է ոչ համակարգված ձևով՝ սկսվում է որևէ մեկ թեմայով և ավարտվում մեկ ուրիշով: Օգտագործված 132 գրականության աղբյուրներից ընդամենը 10% է արդիական և հրապարակված վերջին հինգ տարիների ընթացքում: Տարեցտարի ավելանում են արդի օրինաչափություններն արտացոլող հետազոտություններ, և աշխատությունում անհրաժեշտ էր ներկայացնել վերջին տարիների ընթացքում իրականացված հետազոտություններն, որոնք ճշգրտորեն կարտացոլեին խնդրի ներկային իրավիճակն ու միտումները:

18. Ատենախոսությունում առկա են տեքստի ձևավորման հետ կապված մի շարք խնդիրներ:

- Մի շարք հասկացություններ ատենախոսության որոշ մասերում տրվում են հապավումներով, իսկ այլ մասերում՝ ամբողջական անվանումով, օրինակ՝ <<Ա: Գտնում ենք, որ նպատակահարմար կլիներ հասկացությունն առաջին անգամ օգտագործելուց հետո այն կիրառել միայն հապավումով և այդ սկզբունքը պահպանել ամբողջ ատենախոսության ընթացքում բոլոր հասկացությունների նկամամբ:
- Պարագրաֆ 2.1 արտացոլված չէ բովանդակության ցանկի մեջ:
- Համաձայն <<ԲԿԳԿ-ի կողմից ատենախոսության ձևավորմանը ներկայացվող պահանջներին, գրականության ցանկը կարելի է ներկայացնել կամ այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում, կամ համարակալված ըստ ատենախոսության մասերի հղումների: Մինչդեռ, ատենախոսությունում պահպանված չեն ոչ առաջին, ոչ երկրորդ ձևաչափերը: Օրինակ, 13-րդ աղբյուրի հեղինակն է 13. Radian,

Ա., իսկ 14-րդ՝ Afonso, A., & Sousa, R. M. (2012) և այդպես ամբողջ գրականության ցանկը:

Եզրակացություն

Բովանդակության հիման վրա կարելի է եզրակացնել, որ ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտական աշխատանք, ինչի մասին վկայում են ուսումնասիրությունում ներկայացված արդյունքները: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, այնպես ինչպես ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները ընդունելի են: Հետազոտության արդյունքում առաջադրված առաջարկությունների կիրառումը կարող է ազդեցություն ունենալ <<-ում ավելի արդյունավետ հարկային քաղաքականություն վարելու համար:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական պայմաններն ու արդյունքները: Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են յոթ գիտական հրապարակումներում:

Էմմա Աշոտի Թավաղյան «Հարկային քաղաքականության ազդեցության գնահատումը «Հակոբոստեսական ցուցանիշների վրա» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԲԿԳԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ տնտեսագիտության թեկնածու

Հ.Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ



**Հ.Գ. Պետրոսյանի ստորագրության հակուլթյունը
հաստատում եմ՝**

**Ոուս-Հայկական (Սլավոնական) համայստանի
գիտական բարտուղար, բ.գ.թ.**

Ա.Ս. Կասաբաբով

23.10.2025 p.